ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի նախագահ
«Հետք» թերթի խմբագիր
Էդիկ Բաղդասարյանին

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

Ի պատասխան Ձեր՝ 14. 04. 2020թ.՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հարցման, տեղեկացնում ենք, որ

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու և հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գումարներն օրինականացնելու դեպքերի առթիվ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում 2018 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ:

31.10.2019թ. վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել նշված քրեական գործով վարույթը կարճելու և Արմեն Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու համար՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ

հոդվածով նախատեսված հանցանք կատարելու համար՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված մյուս հարցերի վերաբերյալ քրեական գործով տվյալներ առկա չեն եղել:

Կատարող՝
ՀՀ ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Էդգար Արսենյան

Հարգանքով՝
ՀՀ դատախազության
հանրային կապերի բաժնի պետ՝ Ա. Խաչատրյան

17.04.2020

X

VERIFIED OCSP 17.04.2020 17:12:02 GMT+4

Подписано: KHACHATRYAN AREVIK 6610880360